Շուշաննա Թևանյան

ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության փորձագետ

11.07.2022թ.

Եռամսյակային հաշվետվություն

Հաշվետվության հասցեատեր

Հաշվետվությունը կներկայացվի ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ Հայկ Մուրադյանին՝ գնահատման նպատակով:

Հաշվետվության նպատակ

Այս հաշվետվությունը նպատակ ունի՝ հասցեատիրոջն ամփոփ և թափանցիկ կերպով ներկայացնելու իմ՝ որպես մոնիթորինգի և գնահատման փորձագետի կատարած աշխատանքի և ստացած արդյունքների մասին տեղեկատվությունը:

Հաշվետվության կառուցվածք

Փաստաթուղթը Աղյուսակ 1-ի տեսքով ներկայացնում է հերթական երեք ամսիների ընթացքում արված աշխատանքների հիմնական ուղղությունները, ձեռնարկված գործողությունները և դրանց արդյունքները:

Աղյուսակ 1

Հ/Հ	Ուղղություն	Գործողություն	Արդյունք
1	**Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի (SPAP II) գնահատում**	**1.1.** SPAP-ի գրասենյակի աշխատակից Նվարդ Մկրտչյանի հետ համատեղ մշակել եմ SPAP II ծրագրի գնահատման համար առաջնային տվյալների հավաքագրման նպատակով խորհրդատու կազմակերպություն ընտրելու <u>տեխնիկական առաջադրանք:</u>	**1.1.** Մշակված տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է Համաշխարհային բանկի (ՀԲ) գործընկերներին. վերջիններիս առաջարկներն ինկորպորացվել են փաստաթղթում: Վերջինիս՝ համապատասխան փոխնախարարի կողմից հաստատվելուց հետո, խորհրդատու կազմակերպություն ընտրության գործընթացը կմեկնարկի:
		1.2. <u>Մասնակցել եմ</u> SPAP II ծրագրի գնահատման <u>ընտրանքի առաջարկի վերջնականացման աշխատանքներին:</u>	**1.2.** Ընտրանքի վերաբերյալ առկա անորոշությունների բացահայտման նպատակով գրություն եմ պատրաստել՝ ուղղված Ազգային Ինստիտուտին: Պատասխանն ակնկալվում է մոտ օրերս: Դրա հիման

			վրա ընտրանքի առաջարկը կթարմացվի և կուղարկվի ՀԲ գործընկերներին՝ կարծիքի:
2	**ՄԳ համակարգի ներդրում**	**2.1.** Հիմնվելով նախորդ եռամսյակի ընթացքում իրականացված մոնիթորինգի եվ գնահատման համակարգի մասով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա՝ <u>խմբագրել եմ</u> Ազգային ինստիտուտի կողմից ներկայացված «Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 28-ի N70/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» <u>հրամանի նախագիծը:</u> **2.2.** Վարչության պետի հանձնարարությամբ՝ <u>հավաքագրել եմ</u> ոլորտային վարչությունների և շահագրգիռ տարբեր անձանց <u>դիտարկումները</u> մշտադիտարկման եվ գնահատման կարգը և մեթոդաբանությունը հաստատելու մասին հրամանի նախագծի վերաբերյալ: **2.3.** <u>Մշակել եմ</u> «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ուղղությունների առաջարկ» <u>ռազմավարական փաստաթուղթը</u>՝ առաջարկելով ձևավորել աշխատանքային խումբ, որ կիրականացնի նախարարության ՄԳ կարողությունների մասով կարիքների խորքային գնահատում (հաշվի առնելով, որ SPAP II-ի շրջանակներում նման գնահատում երբևէ չի արվել, և ՄԳ-ով զբաղվող աշխատակիցների կարողությունների զարգացում տեղի չի	**2.1.** Հրամանի նախագծի՝ իմ կողմից խմբագրված տարբերակը ներկայացվել է ինչպես վարչության պետին, այնպես էլ նախարարի բոլոր տեղակալներին և գլխավոր քարտուղարին: Կազմակերպվել է հանդիպում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ քննարկելու առաջարկվող փոփոխությունները: Բոլոր դիտարկումները հավաքագրվել են՝ նախագծի հետագա լավարկման նպատակով: Ազգային ինստիտուտը քննարկման արդյունքների հիման վրա մոտ օրերս պետք է ներկայացնի նախագծի վերջնական տարբերակը: **2.2.** Հրամանի նախագծի վերաբերյալ բոլոր դիտարկումները փաստաթղթում ինկորպորացված կերպով ներկայացվել են վարչության պետին: **2.3.** Փաստաթուղթը համաձայնեցվել է նախարարի բոլոր տեղակալների հետ և SPAP-ի գրասենյակի միջոցով ներկայացվել ՀԲ-ին: Վերջինիս արձագանքը ստանալուց հետո կպլանավորվեն հետագա քայլերը:

		ունեցել) և տարվա վերջում կաջակցի ՄԳ արդեն իսկ մշակված մեթոդաբանության և ՄԳ ուղեցույցի բարելավման աշխատանքներին:	
3	**Աշխատանքի եվ սոցիալական պաշտպանության համապարփակ ռազմավարության մշակում**	**4.1. ա)** Ներկայացրել եմ դիտարկումներ ռազմավարության տեքստային տարբերակի վերաբերյալ: **բ)** Ռազմավարությունը ֆինանսական գնահատման ենթարկելուն և շահագրգիռ գերատեսչություններով շրջանառելուն ընդառաջ՝ համակարգել եմ մասնագիտական վարչությունների և նախարարի տեղակալների գրասենյակների կողմից դիտարկումների և արդյունքային ցուցանիշների թիրախային արժեքների վերջնականացման աշխատանքները: **գ)** Նախարարի խորհրդական Վիկտորյա Այդինյանի հետ համատեղ իրականացրել եմ ռազմավարության և կից ձևաչափերի վերջնական խմբագրական աշխատանքները: Ի հավելումն սրա՝ պատրաստել ենք ռազմավարության՝ e-draft ելք անելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության գործընկերների օգնությամբ: **դ)** Ռազմավարությունը միջազգային գործընկերներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և փոխվարչապետի գրասենյակին ներկայացնելու համար Վիկտորյա Այդինյանի հետ պատրաստել ենք սահիկաշար:	**4.1.** Ռազմավարությունը տեղակայվել է e-draft-ում և շրջանառվել շահագրգիռ գերատեսչություններով: Փաստաթուղթը ներկայացվել է զարգացման գործընկերներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ինչպես նաև փոխվարչապետի գրասենյակին: Ստացվող դիտարկումների հիման վրա կշարունակվեն խմբագրական աշխատանքները, և կվերջնականացվի ֆինանսական գնահատման գործընթացը: Մոտ օրերս նախատեսվում է ռազմավարության ներկայացում ակադեմիական շրջանակներին:
4	**Ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհրդի նիստ**	**5.1.** ԿՍԱԳՀ խորհրդականներ Լուսինե Ձանազյանի, Վարդուհի Եսայանի և համապատասխան մասնագիտական վարչությունների հետ մշակել եմ նախապատրաստական նյութեր, մասնավորապես՝ նախարարության	**5.1.** Խորհրդ նիստը կայացել է, որտեղ բոլոր շահագրգիռ կողմերն ապահովված են եղել համապատասխան տեղեկատվական նյութերով:

		կողմից ժողովրդագրության մասով իրականացվող ծրագրերի և մշակվող ռազմավարության վերաբերյալ տեղեկանքներ և սահիկաշար:	